«Սոցիոմետր» անկախ սոցիոալագիական կենտրոն

Վազաշենի հանքերևակման շրջակա բնակավայրերի սոցիալ-ազգագարական պոտենցիալի գնահատման սոցիոլոգիական հետազոտության

հաշվետվություն

2010 – 2011

1. Ներածություն

1.1 Հետազոտման նպատակը

Պատվիրատուն պլանավորում է Վազաշեն գյուղի մոտակայքում գտնվող բազմամետաղյա հանքերևակման երկրաբանական հետախուզում, որից հետո կազմակերպել հանքավայրի շահագործում, կառուցելով հարստացման կոմբինատ և բանվորական թաղամաս։

Այս խնդիրների իրականացման համար կպահանջվի.

- Երկրաբանական-հետախուզական աշխատանքների համար մոտ 50 աշխատող
- հանքավայրի շահագործման համար 150-200 աշխատող
- կոմբինատի գործարկման համար մոտ 120-150 աշխատող

Բացի դրանից, աշխատողների սպասարկման համար կառաջանան 2-րդային աշխատաեղեր՝՝ սննդամթերք արտադրողների ու մատակարարողների, սննունդ պատրաստողների, կենցաղային այլ կարիքներ բավարարողների։

Իսկ կենտրոնական խնդիրը՝ հարստացման կոմբինատի համար որակյալ մասնագետների ապահովումն է։

Դրա համար նախտեսվում հիմնել.

- Պրոֆեսիոնալ-տեխնիկական ուսումնարան՝ միջնակարգ դպրոցի շրջանավարտների համար
- Քոլեջ՝ավագ դպրոցի շրջանավարտների համար
- Դասընթացներ՝ հասարակական սննդի մասնագետների համար
- Թոշակավորել երկրաբանական ֆակուլտետ ընդունվող տեղացիներին

Այսպիսով սոցիոլոգիական հետազոտության խնդիրներն են պարզել

1. Պոտենցիալ աշխատուժի համապատասխանությունը նպատակներին
2. Երիտասարդների պրոֆեսիոնալ կողմնորոշումը հանքագործության նկատմամբ
3. Հողագործների հետաքրքրությունը սննդամթերքի արտադրության։

1.2 Հետազոտման օբյեկտը և հարցման ենթակված ընտանքերի թվաքանակ։

		Հեռա-վորու-թյունը	բնակիչ				Ընտ-անիք	Աշխատ-ունակ		Դպրո-ցական	Հարց-ված ընտ-անիք
			ընդ		Կին	տղա		կին	տղա		
			1989թ	2009թ							
1	Ազատամուտ	9 կմ	4000	3075	1630	1445	915	1223	1085	960	25
2	Այգեհովիտ	5 կմ	2880	3000	1590	1410	1110	1192	1050	770	25
3	Դիտավան	8 կմ	440	390	210	180	110	160	135	70	10
4	Պառավաքար	15 կմ	1920	1920	1020	900	600	760	675	600	20
5	Վազաշեն	2 կմ	990	630	330	300	340	250	230	200	10
6	Վարագավան	15 կմ	720	670	355	315	200	265	235	150	10
	ընդամենը		10950	9685	5135	4550	3400	3850	3410	2750	100

1.3 Հետազատության իրականացման փուլերը և ժամկետները:

Փուլ 1 – Էլակետային տվյալների հավաքագրումը և վերլուծություն՝ 11-12. 2010 թ.
Փուլ 2 – Ընտանիքների անդամների կարծիքների հարցում՝ 01.02.2011 թ.
Փուլ 3 –Արդյունքների ամփոփում և եզրակացությունների կազմում՝ 03.2011 թ.

Հարցումները անցկացվել են «դեմ-առ-դեմ» ընտանիքների առկա անդամների հետ:

2. Արդյունքների վերլուծությունը

2.1. Հնարավոր աշխատաեղերից օգտվելու առումով հարցված 100 ընտանիքների անդամների կարծիքները բաշխվել են այսպես.

2.1.1 Տղամարդիկ

	Զբաղմունք	%	հոգի
1	Հանքափոր	11	375
2	Կոմբինատում / շարքային	10	344
3	Տեխնիկ, վարորդ	6,0	205
4	Շինարար	11	372
5	Ոչ ֆիզիկական	21	712
6	Եթե մասնագիտանան	18	612
	Ընդամենը	77	2620
7	Դժվա րացել են պատասխանել	23	780
	ընդամենը	100	3400

2.1.2 Կանայք

	Զբաղմունք	%	հոգի
1	Կոմբինատում / շարքային	3,0	115
2	Կենցաղ սպասրկող	2,5	95
3	Խոհարար/մատուցող	2,0	77
4	Ոչ ֆիզիկական	9,5	554
5	այլ	2,0	77
6	Եթե մասնագիտանան	7,0	270
	ընդամենը	26	1188
	Դժվանացել են պատասխանել	74	2722
	ընդամենը	100	3850

2.1.3 Դպրոցական (10-12 դասարանցի)

	Մասնագիտական ուսուցում	տղա		աղջիկ՝	
		%	հոգի	%	հոգի
1	Պրոֆտեխուսումնարան	21	90	29	116
2	Քոլեջ	14	59	18	72
3	Բուհ	8	33	12	48
	ընդամենը	43	182	59	236
	Դժվարացել են պատասխանել	57	234	41	164
	ընդամենը	100	425	100	400

2.2 Ըստ ստացված պատասխաններից հետևում է, որ

- աշխատուժի պոտենցիալը բավականի մեծ է, եթե հաշվի չառնենք նրանց մասնագիտացման բացակայությունը
- անհրաժեշտ կլինի հրավիրավիել դրսի մասնագետների, մինչև տեղական մասնագետների պատրաստումը
- պատանիների և երիտասրդաների բավարար մասը մտադրված է ստանալ մասնագիտական ուսուցում՝ տեղում աշխատելու հեռանկարով

2.3 Սննդամթերքի տեսականին բավարար է, քանի որ տեղում հնարավեր արտադրել.

- բանջարեղեն / կարտոֆիլ, կաղամբ, բադրիջանմ, գազար, բիբար, կանաչեղեն/
- միս /տավար, ոչխար, խոզ, հավ/
- կաթնամթերք /կաթ, սերուցք, մածուն, թան, պանիր/
- մրգեղեն

2.3.1 Ըստ գյուղատնտեսությամբ զբաղվող հարցվածների կարծիքի, երկկողմանի օգտավետ կլինի պայմանագիր կնքել գյուղական տնտեսության հետ՝ մթերման գնի, տեսականու ու ծավալների վերաբերյալ և կանխավճար կատարել:

3. Եզրակացություններ

1. Սկզբնական ժամանակահատվածում որակյալ ու փորձառու մասնագետների խիստ պահանջ կզգացվի, անհրաժեշտ կլինի հրավիրել և դրանց համար հանրակացարան կառուցել
2. Աշխատատեղ ներկայանալու ու տուն վերադառնալու համար կպահանջվեն «բանվորական ավտոբուսներ» երկու երթուղիով՝ «Ազատամուտ-հանքավայր-կոմբինատ» և «Վարագավան-Պառավաքար-հանքավայր-կոմբինատ»
3. Նույնը ուսումնական հաստատություններ հաճախելու և տուն վերադռանալու համար
4. Աշխատողների կենսական պահանջների բավարարման համար անհիրաժեշտ կլինի ստեղծել կենցաղսպասարկման, առևտրի և ժամանցի օբյեկտեներ, ինչը կմեծացնի երկրորդային աշխատատեղերի թվաքանակը և կտրուկ կնազեցնի արտագաղթը: